

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱԹՈՒՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ

**ՀՈՎՍԵՓ ԹՈՒԹՈՒՆՁՅԱՆԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ**

**ԺԹ.00.01 - «Հոգեբանության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

- Գիտական ղեկավար՝* հոգեբանական գիտ. դոկտոր
Սամվել Սուրենի Խուդոյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝* հոգեբանական գիտ. դոկտոր
Այա Սուրենի Բերբերյան
հոգեբանական գիտ. թեկնածու
Ռուբեն Հակոբի Պողոսյան
- Առաջատար կազմակերպություն՝* Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 20-ին ժամը 12⁰⁰-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 19-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064
մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ

Կ. Ե. Վարդանյան

ԱՇՆԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հետազոտության կարևորությունն ու այժմեականությունը պայմանավորված են ժամանակակից հայ հոգեբանության մեջ պատմական անցյալի, հայ հոգեբանության պատմության, հայ հոգեբանների գիտական ժառանգության օրյեկտիվ վերլուծության, հոգեբանության պատմագրության հիմնախնդիրների ուսումնասիրությունների պահանջով:

Հոգեբանության պատմությունը, լինելով գիտության յուրատեսակ հիշողություն, ոչ միայն բացահայտում է հոգեբանական մտքի զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև անհրաժեշտ հիմքեր է ստեղծում հոգեբանական գիտության հետագա զարգացման համար: Քսանմեկերորդ դարում, հասարակության և գիտության զարգացման արդի պայմաններում, հոգեբանները կարիք ունեն ռեֆլեքսիվ հայացք գցելու հոգեբանության անցյալի վրա, որպեսզի հասկանան և բացատրեն գիտության վաղվա օրը:

Հայ հոգեբանական գիտության մեջ, խորհրդային շրջանում, պատմա-հոգեբանական ուսումնասիրությունները թեև իրականացել են պարտադրված գաղափարախոսության հարթակում, սակայն ունեցել են լուրջ ձեռքբերումներ: Հատկապես կարևորվել է հայ առանձին գործիչների հոգեբանական գաղափարների ուսումնասիրությունը, որն ինքնանպատակ չի եղել: Մինչդեռ հետխորհրդային շրջանում, հայ հոգեբանական մտքի պատմությանը ընդհանրապես և մասնավորապես խորհրդային հոգեբանների գիտական ժառանգությանը նվիրված անկողմնակալ, ամբողջական հետազոտություններ չկան: Արդյունքում խախտվել է գիտական ավանդույթների ժառանգականությունը, որը խոչընդոտում է հոգեբանական գիտության մեջ ազգային ուղու ձևավորմանը:

Աշխատանքը արդիական է նաև այն պատճառով, որ առաջին անգամ փորձ է արվում հայ հոգեբանության պատմության հարցերի քննարկումը էմպիրիկական մակարդակից բարձրացնել տեսական վերլուծության մակարդակի, տեսանելի դարձնել հայ հոգեբանության կայացման առանձնահատկությունները խորհրդային շրջանում:

Մյուս կողմից պարզ է, որ գիտությունը անդեմ չէ: Գիտական միտքը ծագում և զարգանում է անհատների ջանքերով, ուստի գիտնականի կյանքի և ստեղծագործական ուղու վերլուծությունը հոգեբանության պատմության առանցքային խնդիրներից է: Ասվածը էլ ավելի է կարևորվում խորհրդահայ հոգեբանական դպրոցի առումով, քանի որ հենց խորհրդային տարիներին ասպարեզ իջան հայ հոգեբանության նշանավոր դեմքերը՝ Գ. Էդիլյան, Մ. Մազմանյան, Ե. Միլերյան, Ա. Լալայան, Մ. Երիցյան և այլոք, որոնց կատարած աշխատանքները մինչև օրս ըստ արժանվույս չեն վերլուծվել և արժեքավորվել:

Հայ հոգեբանների այս երևելիների կողքին Հովսեփ Մովսեփ Թութունջյանի հոգեբանական հայացքների պատմահոգեբանական ուսումնասիրության անհրաժեշտությունը դառնում է անվիճելի, քանի որ նա ևս կանգնած էր խորհրդահայ հոգեբանության ձևավորման ակունքներում: Հ. Մ. Թութունջյանի ստեղծագործությանը բնորոշ է հետազոտական ուղղվածության բազմակողմանիությունը, տեսական և էմպիրիկական արդյունքների հարստությունը: Նրա գիտական ժառանգության մեջ մենք գտնում ենք հայ հոգեբանության մեջ սպորտի, ստեղծագործության, երեխայի և մանկավարժական հոգեբանության ոլորտների, մտածողության գործընթացի փորձարարական հետազոտություններ, որոնք նպաստել են հիշյալ բնագավառների հետագա զարգացմանը: Առանձնահատուկ հետաքրքրության է արժանի Հ. Մ. Թութունջյանի ներդրումը ոչ

միայն հայ, այլև խորհրդային հոգեբանության պատմագրության մեջ: Նա նպաստել է հոգեբանության պատմության տեսական, մեթոդաբանական հարցերի մշակմանը, առաջադրել է հոգեբանության պատմության մեթոդների, սկզբունքների, հոգեբանության պատմագրության շրջաբաժանման հարցեր, քննական վերլուծության է ենթարկել խորհրդային, հայ և արտասահմանյան հոգեբանական դպրոցների գիտական ձեռքբերումները, որը կարևոր նշանակություն է ունեցել հոգեբանության տեսության և պատմության հետագա զարգացման համար: Բավական է միայն փաստել, որ հոգեբանության պատմության հիմնախնդիրներին նվիրված մերօրյա բոլոր հետազոտություններում առկա է Հ. Թութունջյանի անունը, իսկ 80-ականների վերջին ԱՄՆ-ում հրատարակված հոգեբանության մասնագիտական քառահատոր հանրագիտարանում, խորհրդային մի քանի հոգեբանների թվում, հատուկ անդադարձ է կատարվել հայագգի գիտնականի ստեղծագործությանը և դրականորեն գնահատվել նրա գիտական գործունեությունը:

Հետազոտության նպատակը` հոգեբանական մտքի զարգացման գործում Հ. Մ. Թութունջյանի ներդրման բացահայտումն է:

Հետազոտության օբյեկտը Հովսեփ Մովսեսի Թութունջյանի գիտական ժառանգությունն ու գիտական գործունեությունն են:

Հետազոտության առարկան` հոգեբանությանը վերաբերող Հ. Թութունջյանի գիտական հայացքներն են:

Հետազոտության խնդիրներն են`

1. Պարզել Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքների ձևավորման ակունքներն ու հետագա զարգացումը` հիմնվելով խորհրդային հոգեբանության առանձնահատկությունների վերլուծության վրա.

2. Վերլուծել Հ. Մ. Թութունջյանի կենսագրության և գիտահետազոտական գործունեության հիմնական փուլերը և ուղղվածությունը.

3. Ուսումնասիրել սպորտի, երեխայի, մանակավարժության, ստեղծագործության հոգեբանության ոլորտներում, ինչպես նաև մտածողության գործընթացի վերաբերյալ տեսական և փորձարարական հետազոտություններում Հ. Մ. Թութունջյանի գիտական բացահայտումները և մշակումները.

4. Վերլուծել Հ. Մ. Թութունջյանի` հոգեբանության պատմության հիմնախնդիրների վերաբերյալ պատկերացումների զարգացման, խորհրդային պատմագրության սկզբունքների մշակման տրամաբանությունը, պատմահոգեբանական հայեցակարգի միջուկը հանդիսացող գաղափարները.

5. Տեսանելի դարձնել Հ. Մ. Թութունջյանի` հոգեբանության պատմության և պատմագրության մեջ ունեցած ներդրման նշանակությունը.

6. Բնութագրել Հ. Մ. Թութունջյանի գիտակազմակերպչական գործունեության առանձնահատկությունները.

7. Համակարգել, մատենագիտական մշակման ենթարկել Հ. Մ. Թութունջյանի գիտական ստեղծագործության արդյունքները, կենսագրության և գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ նոր փաստերը` հիմնվելով արխիվային նյութերի վրա:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքների, գիտական գործունեության պատմահոգեբանական վերլուծությունը հիմնված է համակարգային և համալիր մոտեցման, գիտական ավանդույթների ժառանգորդության սկզբունքի, զարգացման և պատմականության, պատմականի և տրամաբանականի, տեսության և պատմության միասնության սկզբունքի վրա:

Միևնույն ժամանակ հետազոտության տեսական և մեթոդաբանական սկզբնաղբյուր են ծառայել ինչպես համագիտական (Թ. Կուն, Ի. Լակատոս, Կ. Պուպեր), այնպես էլ հոգեբանության պատմության հիմնադրույթները (Բ. Գ. Անան, Կ. Մ. Ալախվերդով, Լ. Ի. Անցիֆերովա, Ե. Ա. Բուդիլովա, Լ. Ս. Կիզոտսկի, Ա. Ն. Ժդան, Ա. Կ. Պետրովսկի, Կ. Ա. Ռամանեց, Բ. Մ. Տեպլով, Հ. Մ. Թութունջյան, Մ. Գ. Յարոշևսկի, Տ. Մ. Մարցինկովսկայա, Ս. Բ. Բոգդանչիկով, Ս. Լ. Ռուբինշտեյն, Տ. Լիհի, Գ. Ա. Մազիլով, Կ. Կուցովա, Ա. Յասնիցկի, Դ. Շուլց, Ս. Շուլց, Է. Բորինգ, Մ. Էսխեր):

Հ. Մ. Թութունջյանի գիտական գործունեության և հոգեբանական հայացքների վերլուծությունն իրականացնելիս հիմք ենք ընդունել սուբյեկտիվ-անձնային մոտեցումը (Բ. Գ. Անան, Դ. Գ. Բոգոյավլենսկայա, Կ. Կարպինսկի), որով հնարավոր է դառնում տեսանելի դարձնել ստեղծագործող գիտնականի անձը՝ հաշվի առնելով գիտնականի կենսագրության փաստերը, նրա հայացքների ձևավորման փուլերը: Սակայն Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքների վերլուծությունն իրականացնելիս հիշյալ մոտեցումը կիրառել ենք շատ լայն ընդգրկումով: Մի կողմից ուսումնասիրել ենք գիտնականի կյանքի ուղին զարգացման մեջ, դիտարկել պատմաքաղաքական պայմանները և գիտության մեջ ընթացող գործընթացները՝ բացահայտելով անձի դինամիկ, շարժուն փոխհարաբերությունն իր կյանքի պայմանների հետ, ինչպես նաև հոգեբանական այն մեխանիզմներն ու օրինաչափությունները, որոնց միջոցով անձը կերտում է իր անհատական կյանքը: Մյուս կողմից այսպիսի մոտեցմամբ հնարավոր է դարձել տարանջատել գիտնականի գաղափարական հավատամքը հոգեբանական կոնկրետ գաղափարներից, քանի որ գաղափարախոսությունը, պատմական պայմանները և կենսագրական փաստերը յուրատեսակ ֆոն են, որի վրա հստակ գծագրվում է ստեղծագործող գիտնականի դիմանկարը: Նման մոտեցումն օգնում է կատարել գիտական ժառանգության բովանդակային վերլուծություն, առանձնացնել կառուցողական պահերը, գիտնականի հայացքների ձևավորման բարդ և բազմաբովանդակ ընթացքը:

Հետազոտության սկզբնաղբյուր են ծառայել Հ. Մ. Թութունջյանի՝ իրատարակված և անտիպ գիտական նյութերը, ինչպես նաև ՀՀ արխիվում պահպանվող փաստաթղթերը, հեղինակի անձնական արխիվային նյութերը, նամակները: Սկզբնաղբյուր են դարձել նաև գիտնականի մասին արտահայտված տպագիր նյութերը, նրա կյանքի և գիտական ստեղծագործության վերաբերյալ գործընկերների հիշողությունները:

Հետազոտության խնդիրների լուծման և դրված նպատակին հասնելու համար կիրառվել են **տեսական և էմպիրիկական հետազոտման հետևյալ մեթոդները.**

- պատմագենետիկական մեթոդ,
- գործունեության արդյունքների վերլուծության մեթոդ,
- մատենագիտական վերլուծության մեթոդ,
- կենսագրական մեթոդ,
- հարցազրույցի մեթոդ:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Առաջին անգամ փորձ է արվում վերլուծել Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքները՝ հաշվի առնելով նրա կենսագրության փաստերը, աշխարհայացքի ձևավորման պայմանները:

2. Ներկայացվել է Հ. Մ. Թութունջյանի գիտական կենսագրությունը՝ բոլոր փուլերի միասնականացման եղանակով, որը հնարավորություն է ընձեռում լիարժեք ձևով ցույց տալ նրա ներդրումը հոգեբանական գիտության մեջ:

3. Ամբողջական վերլուծության միջոցով ցույց է տրվել հոգեբանության պատմության բնագավառում Հ. Մ. Թութունջյանի մշակումների, պատմագրական մոտեցման գիտական նշանակությունը հոգեբանության համար:

4. Համակարգվել և մատենագիտական մշակման է ենթարկվել Հ. Մ. Թութունջյանի գիտական ժառանգությունը:

5. Առաջին անգամ ուսումնասիրվել են Հ. Մ. Թութունջյանի անձնական արխիվային նյութերը՝ նամակները, որը հնարավորություն է տվել ընդլայնել հայ հոգեբանության զարգացման մասին պատկերացումները՝ լրացնելով դրանք նոր փաստերով:

6. Ամբողջական վերլուծության միջոցով բնութագրվել է Հ. Մ. Թութունջյանի գիտականակերպչական գործունեության ոճը, հիմնավորվել հայ հոգեբանական գիտության կայացման գործընթացում ունեցած նրա ներդրումը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության նյութերի բովանդակությունը խորացնում և ընդլայնում է հայ հոգեբանության պատմության մասին պատկերացումները, մասնավորապես Հ. Մ. Թութունջյանի ստեղծագործության օստոգենետիկ վերլուծության շնորհիվ հնարավոր է դառնում հասկանալ խորհրդահայ հոգեբանության կայացման գործընթացները: Սպորտի, երեխայի և մանկավարժության, ստեղծագործության հոգեբանությանը նվիրված ուսումնասիրությունների տեսական ընդհանրացումները կարող են հարստացնել հիշյալ ոլորտները նոր բովանդակությամբ, իսկ մի շարք հոգեկան երևույթների միջգիտական մեկնաբանությունները կարող են խթանել միջդիսցիպլինար ձյուդերի հետագա զարգացումը: Հոգեբանության պատմության ոլորտում իրականացված հետազոտությունների միջոցով ցույց է տրվել Հ. Մ. Թութունջյանի գիտական ժառանգության կիրառական ներուժը, որը կարող է նպաստել հայ հոգեբանության պատմագրության զարգացմանը, ժամանակակից պատմահոգեբանական ուսումնասիրությունների տեսամեթոդաբանական խնդիրների մշակմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է առենայնստության մեջ քննարկվող տեսական և մեթոդաբանական խնդիրներով: Առենայնստության նյութերը կարող են օգտագործվել «Հոգեբանության պատմություն» դասընթացում, «Խորհրդահայ հոգեբանություն», «Հայ հոգեբանական մտքի պատմություն» հատուկ դասընթացներում, ինչպես նաև դառնալ տեղեկատվական աղբյուր հոգեբանության պատմագրությանը վերաբերող աշխատանքների և մատենագիտական համապատասխան ուսումնասիրությունների համար:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթներն են՝

1. Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքները զարգացման միագիծ ընթացք չեն ունեցել, որը և հիմք է տալիս նրա գիտական կենսագրության մեջ առանձնացնել երկու փուլ. 1-ին՝ 1950-60-ական թթ. կեսերը, երբ գիտնականի հետազոտություններն ընդգրկում են սպորտի, երեխայի և մանկավարժական, արվեստի հոգեբանության ոլորտների հիմնախնդիրները, և 2-րդ՝ 1960-ական թթ. կեսերից 80-ական թթ. վերջը, որում ուսումնասիրման առարկա են դառնում հոգեբանության պատմության և պատմագրության առարկան, մեթոդները, պարբերացման սկզբունքները, առանձին հոգեբանների և հոգեբանական դպրոցների գիտական հայացքները:

2. Հ. Մ. Թութունջյանի որոշ գաղափարներ հիմք են դարձել հոգեբանության պատմության ուսումնասիրությունների մեթոդաբանության համար: Դրանք են՝ ա) խորհրդային գաղափարախոսական դիրքորոշումից անկախ՝ հոգեբանական տեսության կամ գիտական հայացքների պոզիտիվ-կառուցողական վերլուծություններ,

բ) գիտական ճանաչողության մեջ ժառանգականությունը պահպանելու տրամաբանություն,

գ) հոգեբանական գաղափարների վերլուծություն՝ տվյալ ազգի պատմության և մշակույթի առանձնահատկությունների իմացության հիման վրա:

3. Հ. Մ. Թութունջյանն առաջադրել է հոգեբանության պատմագրության պարբերացման սկզբունքները՝ ըստ արդյունավետության, մշակվածության և նորույթի, որի հիման վրա իրականացրել է խորհրդային պատմագրության առաջին ամբողջական հետազոտությունը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Գիտական դրույթները, հետևություններն ու եզրակացությունները հիմնավորված են բավարար թվով գիտական աղբյուրների, կենսագրական, գիտական փաստերի վերլուծմամբ, փաստաթղթային մեթոդների կիրառմամբ, որոնց միջոցով արտացոլված են աշխատանքի էությունը, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրներն ու նպատակները: Կատարվել է միջգիտական վերլուծություն. օգտագործվել են հոգեբանության, պատմության, փիլիսոփայության, գրականագիտության գիտական աղբյուրները:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության հիմնադրույթները ներկայացվել են գեկուցումների և հրապարակումների ձևով. Երևանի պետական համալսարանում՝ պրոֆեսոր Հ. Մ. Թութունջյանի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում (1998թ.), Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում՝ Մ. Ա. Մազմանյանի անվան հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի հիմնադրման 40-ամյակին նվիրված գիտաժողովում (Երևան, 1997), Հոգեբանների միջազգային XXVII (Ստոկհոլմ, 2000) և XXIX (Բեռլին, 2008) կոնֆերանսների նյութերում, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութերում (Կազան, 2008): Հրապարակայնությունը ապահովված է առանձին արդյունքների քննարկմամբ՝ Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում կազմակերպված տեսական սեմինարներում, ինչպես նաև ԵՊՄՀ-ի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում:

Հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են «Հովսեփ Մովսեսի Թութունջյան (կյանքը և գիտական գործունեությունը)» գրքում (Երևան, 2008 թ.) և 9 տպագրված գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և երեք հավելվածներից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքով 124 էջ է: Գրականության ցանկը կազմում է 132 աղբյուր: Երկու հավելվածներում ներկայացված են մատենագիտական առանձին ցանկեր, երրորդ հավելվածը՝ գործընկերների հետ հարցազրույցի նյութերի տղագրությունն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, տրված են հետազոտության նպատակը, առարկան, օբյեկտը,

խնդիրները, սահմանված են պաշտպանության ներկայացվող դրույթները: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունն ու ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության «**Հ. Մ. Թութունջյանի կյանքի ուղին և գիտական գործունեության սկիզբը**» խորագրով առաջին գլուխը նվիրված է Հ. Մ. Թութունջյանի կենսագրության տիպական պահերի, կյանքի վճռորոշ հանգամանքների լուսաբանմանը, գիտական հետաքրքրությունների ձևավորման նախադրյալներին և գիտական ստեղծագործության հիմնական ուղղությունների վերլուծությանը:

Կենսագրական նյութերի վերլուծության միջոցով ցույց է տրվում Հ. Թութունջյանի կյանքի եզրիպտոսյան շրջանի՝ մասնավորապես Կահիրեի ամերիկյան համալսարանի նշանակությունը ապագա գիտնականի հետագա գործունեության համար: Առանձին գործչի գիտական հայացքների վերլուծությունն իրականացնելիս կարևորվում են թե՞ տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-պատմական պայմանները, թե՞ գիտության զարգացման ներքին տրամաբանությունը: Սակայն վերջիններս պետք է հանդես գան որպես ֆոն, որի վրա ծավալվել է գիտնականի գործունեությունը և որը տրամաբանված, պարզորոշ է դարձնում կոնկրետ ստեղծագործող անձի գիտական հայացքների զարգացման ընթացքը և գիտական ներդրման ծավալները: Ասվածը էլ ավելի է կարևորվում Հ. Թութունջյանի հոգեբանական հայացքների վերլուծության առումով, քանի որ նրա գիտական գործունեությունն իրականացավ խիստ հակասական՝ խորհրդային ժամանակաշրջանում: Նշված ժամանակաշրջանի պատմաքաղաքական պայմանների, խորհրդային և խորհրդահայ հոգեբանական գիտության կայացման գործընթացի և Հ. Թութունջյանի գիտական գործունեության սկզբի համադիր վերլուծությունն ավելի տեսանելի է դարձնում նրա հոգեբանական հայացքների զարգացման տրամաբանությունը:

Աշխատանքի այս բաժնում ցույց է տրվում, որ XX դարի սկզբին, հոգեբանության ճգնաժամի պայմաններում, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դրույթները նոր լիցք հաղորդեցին համաշխարհային գիտական մտքին, իսկ Ռուսաստանում դարձան խորհրդային հոգեբանության կառուցման տեսամեթոդաբանական հիմք: Պատմագիտական, մեթոդաբանական աղբյուրների վերլուծության հիման վրա լուսաբանվում են Հայաստանում հոգեբանության գիտական և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման ուղիները, ցույց տրվում խորհրդային հոգեբանության մեջ ազգային գիտության առանձնահատկությունները:

Հայաստանում հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտ՝ որպես, ժամանակակից իմաստով, գիտական առանձին միավոր, չկար ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, այնպես էլ բավականին երկար ժամանակ դրանից հետո (մինչև հիսունական թվականները): Վերլուծելով 50-ականների պատմաքաղաքական իրավիճակը, խուշրոկյան «ձնհալի» տարիների բարենպաստ ազդեցությունը գիտության զարգացման համար՝ հիմնավորել ենք հայ հոգեբանության մեջ մի շարք ոլորտների միաժամանակյա բուռն զարգացումը և Հ. Թութունջյանի գիտական հետաքրքրությունների զարգացման տրամաբանությունը:

Հ. Մ. Թութունջյանի հոգեբանական հայացքների դիմամիկ ընթացքը նկարագրելիս և դրանք որոշակի փուլերի բաժանելիս հիմք ենք ընդունել զարգացման սկզբունքը, որը գիտական գործունեությունը դիտարկում է որպես տրամաբանական հաջորդական փուլերով ընթացող գործընթաց, որում ժամանակագրական ընթացքին հետևելը պարտադիր պայման է, քանի որ գիտական

գործունեությունը նորի որոնման այնպիսի գործընթաց է, որի ժամանակ գիտնականը միանգամայն նոր հարբերությունների մեջ է մտնում իրականության հետ: Պատմաբաղադրական պայմանների, գիտության մեջ ընթացող քննարկումների և Հ. Թութունջյանի գործունեության օնտոգենետիկ վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնել, որ գիտական կենսագրության առանձնահատկությունները, հոգեբանական հետազոտությունների ուղղվածությունը պայմանավորված են «ժամանակի ոգով»:

Վերլուծելով Հ. Մ. Թութունջյանի գիտական կենսագրությունը՝ պայմանականորեն առանձնացնել ենք 2 փուլ.

Առաջին՝ 1950-60-ական թթ. կեսերը, որն առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների բազմազանությամբ.

Երկրորդ՝ 1960-ական թթ. կեսերից 80-ական թթ. վերջ, երբ ուսումնափորման առարկա են դառնում հոգեբանության պատմության տեսամեթոդաբանական հարցերը:

Այս բաժանումն, իհարկե, խիստ պայմանական է, որովհետև Հ. Մ. Թութունջյանի անցած գիտական ուղին ունի իր ներքին տրամաբանությունը, պատճառաբանվածությունը և փոխկապակցվածությունը:

Հետազոտության այս բաժնում դիտարկվում է, որ Հ. Թութունջյանի՝ հոգեբանության նկատմամբ ունեցած կայուն հետաքրքրությունը վերջնականապես ձևավորվում է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ սովորում է 1948-1951 թթ: 1954 թվականին երիտասարդ գիտնականը պաշտպանում է թեկնածուական թեզ՝ «Կրտսեր դպրոցականների կամքի ձևավորումը ֆիզիկական վարժությունների միջոցով» վերնագրով (գիտական ղեկավար Գ. Հովսեփյան): Թեմայի ընտրությունը պատահական չէր: Նախ հայտնի է, որ Կահիրեում, մինչև 24 տարեկան հասակը, Թութունջյանը զբաղվել է հնգամարտով: Ուստի սպորտի և սպորտսմենի հոգեբանության հարցերը նրան չէին կարող չհետաքրքրել թեկուզ զուտ անձնային պատճառներով: Երկրորդը՝ ֆիզիոլոգիայի նկատմամբ համըդհանուր հետաքրքրությունն էր, որը դրսևորվեց անմիջապես պավլովյան նստաշրջանից հետո: Մատնանաշելով սպորտի հոգեբանության ասպարեզում խորհրդային հոգեբանների (Պ. Ա. Ռուդիկ, Ա. Ց. Պունի, Օ. Ա. Չերնիկովա, Կ. Պ. Ժարով) մինչ այդ կատարած ուսումնասիրությունները՝ ցույց ենք տվել, որ դրանք վերաբերում էին ընդհանրապես ֆիզիկական դաստիարակության միջոցով կամքի ձևավորման հարցերին և շարժողական հմտությունների ձևավորման կառուցվածքային առանձնահատկություններին: Երիտասարդ գիտնականը առաջինն էր, որ անդրադարձավ կոնկրետ սպորտաձևում և կոնկրետ դժվարությունների հաղթահարման մեջ դրսևորվող կամքի ձևավորման խնդիրներին: Հ. Թութունջյանի հետազոտությունն արժեքավոր էր, քանի որ աշխատանքը փորձարարական էր՝ կատարված սպորտային դպրոցի օրինակով, սակայն հարուստ էր տեսական լուրջ քննարկումներով: Հեղինակը առաջին գլխում ներկայացնում է կամքի հիմնախնդիրը, որը մինչև օրս էլ վիճահարույց է և քիչ ուսումնասիրված: Առաջին անգամ սպորտի հոգեբանության մեջ տարբերակվում և դասակարգում է «արտաքին և ներքին դժվարություններ» հասկացությունը: Աշխատանքում կատարվում են լուրջ գիտական ընդհանրացումներ, փորձ է արվում մեկնաբանել թույլ կամքի ֆիզիոլոգիական, բնախոսական հիմքերը:

Հետագայում Հ. Թութունջյանը կրկին անդրադառնում է սպորտի հոգեբանության հարցերին՝ հանդես գալով մի շարք հոդվածներով. «Շարժողական հմտությունների և կամային որակների փոխադարձ կապերի զարգացման մա-

սին», «Թեթև ատլետիկայի պարապմունքների ընթացքում ավագ դպրոցականների մեջ հաստատականության և ինքնագսպման ձևավորման մեթոդները», «Թեթև ատլետիկայի մեջ դժվարությունների հոգեբանական վերլուծությունը»:

50-ականների կեսերից Հ. Մ. Թութունջյանի համար սկսվում է գիտական որոնումների նոր շրջան: Գիտության և կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները նոր խնդիրներ են դնում երեխայի հոգեբանության և մանկավարժության առաջ: Հ. Թութունջյանը հանդես է գալիս մի շարք հոդվածներով՝ «Կրտսեր դպրոցականի ուշադրության դաստիարակումը ուսուցման պրոցեսում», «Կրտսեր դպրոցականի հոգեբանական հիմնական առանձնահատկությունները», «Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի հոգեբանական հիմնական առանձնահատկությունները»: Թեև բովանդակային առումով այս հոդվածները յուրօրինակ չէին, սակայն պարունակում են մի շարք գիտական հիմնավորումներ: Մասնավորապես երեխայի զարգացման ընթացքում կարևորելով խոսքը՝ գիտնականը անդրադառնում է կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման առանձնահատկություններին: Հ. Թութունջյանը կրտսեր դպրոցականի խոսքում բացահայտում է լեզվաբանության մեջ հայտնի դրափոխության երևույթը, երբ տեղի է ունենում բառերի հնչյունների հաջորդականության խախտում, որը նկատվում է ոչ միայն բանավոր խոսքում, այլ նաև գրաձանաչության ուսուցման ժամանակ: Վկայակոչելով Ա. Ռ. Լուրիայի՝ ավտաբանական զարգացման ընթացքում հանդիպող դրափոխության հոգեբանախոսական հիմնավորումները, հեղինակը, սակայն, հիմնավորում է դրափոխության երևույթը նորմալ զարգացման ընթացքում: Բանավոր խոսքում դրափոխության հոգեբանախոսական հիմնավորումը, ըստ հեղինակի, պայմանավորվում է բառի լսողական և շարժողական (արտասանական) մտապատկերներ կազմելու աղավաղմամբ: Դրափոխության երևույթի վերացման համար, ըստ հեղինակի, անհրաժեշտ է, որ երեխան նախ լսողությամբ ձիշտ ըմբռնի բառը, նրա հնչյունային հատկանիշները, ապա՝ բարձրաձայն և հետևողական վարժությունների միջոցով ձիշտ վերականգնի և արտասանի բառի հնչյունների խախտված կարգը:

Այս գլխում դիտարկվում է մանկավարժության, երեխայի հոգեբանության, ոլորտում Հ. Թութունջյանի հայացքների դինամիկ զարգացումը: 1980 թվականին Երևանում լույս է տեսնում Հ. Մ. Թութունջյանի «Երեխայի հոգեբանության հարցեր» աշխատությունը, որում նա ընթերցողին է ներկայացնում իրեն ժամանակակից Ֆրանսիացի առաջադեմ հոգեբաններ Հ. Վալոնի, Ռ. Չազոյի, Պ. Օլբրոնի և Ֆ. Մալրիոյի հայացքները երեխայի հոգեկանի առանձնահատկությունների մասին: Սույն մենագրությունը արժեքավոր էր ոչ միայն տեսական քննարկումներով, այլև նրանով, որ այն գրվել էր սկզբնաղբյուրների ուսումնասիրման և հիշյալ հեղինակների (բացառությամբ Հ. Վալոնի) հետ ունեցած զրոյցներից հավաքած փաստերի հիման վրա: Քննելով վերոհիշյալ հեղինակների գաղափարները, հեղինակը եզրակացնում է, որ, անկախ ազգային պատկանելությունից և աշխարհագրական սահմաններից, երեխայի գիտական ուսումնասիրումը բոլոր դեպքերում նպաստում է նրա ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ հոգեբանական ճանաչողության մակարդակի բարձրացմանը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում տարիքային հոգեբանության առաջ ծառայել էին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին երեխայի հոգեկան զարգացման մեխանիզմների և փուլերի, երեխայի հոգեկանի ձևավորման, տարիքային և անհատական առանձնահատկությունների փոխհարաբերու-

յունները: Ուստի, գիտական տրամաբանության տեսակետից հասկանալի է Հ. Թութունջյանի՝ մանկաբուժական հոգեբանությունը որպես միջառարկայական գիտություն առաջադրելու հարցը, որը նորություն էր խորհրդահայ գիտության համար: Մանկաբուժական հոգեբանությունը, ըստ գիտնականի, լինելով միջառարկայական գիտություն, պետք է լուծի երեխայի օնտոգենետիկ զարգացման (առողջ և այնտաբանական) առանձնահատկությունները, հետազոտի միջավայրի և ժառանգական գործոնների փոխազդեցությունը, մանկական տարբեր հիվանդությունների ազդեցությունը անհատական հոգեբանական տարբերությունների վրա, ըստ այդմ նա պետք է լուծի դաստիարակության և ուսուցման հետ կապված մի շարք խնդիրներ: Հ. Թութունջյանի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ նա սահմանում է մանկաբուժական հոգեբանության առարկան, խնդիրները և սկզբունքները, որոնք կնպաստեն երկու գիտությունների հավաքած տվյալների հիման վրա ընդհանրացումներ կատարելուն: Այս ենթազվխում անդրադարձ է կատարվում բուհական մանկավարժության հիմնախնդիրներին՝ նվիրված ուսումնասիրություններին: Նա հանդես է գալիս «Բուհական մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր» խորագիրը կրող հոդվածներով, որոնցում ընդգծում է խորհրդահայ հոգեբանների կողմից անտեսված կամ քիչ մշակված մի շարք հարցեր: Մասնավորապես նա կարևորում է բուհական դասախոսի (այդ թվում նաև ոչ մանկավարժական բուհի) հոգեբանական պատրաստության խնդիրը, բարձրագույն մասնագիտական մտածողության ձևավորման հոգեբանական հարցերը, կարևորում է քննական իրադրությունում դասախոսի և ուսանողի հոգեվիճակի, հոգեբանության բուհական դասավանդման, հայ ուսանողի համար հոգեբանության դասագրքերի պատրաստման, հոգեբանության բուհական դասերի պատրաստման հարցերը: Հ. Թութունջյանի դրույթները՝ կրթության և մանկավարժության վերաբերյալ, զուրկ չեն արդիական հնչեղությունից:

Հ. Թութունջյանի գիտական գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում արվեստի և ստեղծագործության հոգեբանությունը նվիրված հետազոտությունները: Քնարերգության մեջ սինեսթեզիայի երևույթի բացահայտմամբ Հ. Թութունջյանը հանդես եկավ 1959 թ. «Մ. Մեծարենցի բանաստեղծական ըմբռնման մի առանձնահատկության մասին» հոդվածով: Հետագայում հրատարակված «Հոգեբանական էություններ» գրքում, վերոհիշյալ հոդվածի հետ մեկտեղ զետեղվեց նաև «Ռազմիկ Դավոյանի քնարերգությունը սինեսթեզիայի լույսի տակ» ծավալուն հոդվածը, որը հենց իր հեղինակի այնդամբ, սինեսթեզիային նվիրված ուսումնասիրությունների տրամաբանական շարունակությունն է, և որոնցում առաջադրված է մի կարևոր խնդիր, այն է՝ գրականության և հոգեբանության փոխհարաբերությունը: Թութունջյանի հետազոտություններից պարզորոշ երևում է, որ նա քաջատեղյակ է եղել ժամանակի գրականագիտական մտքին և արդյունքում եկել եզրակացության, որ թեև մի շարք գրականագետներ (Ա. Տերտերյան, Մ. Մկրյան, Հր. Թամրազյան, Ս. Աղաբաբյան, Տ. Հախումյան, Ա. Ինձիկյան) փորձել են առաջ քաշել հոգեբանական հարցադրումներ, սակայն դրանք համակարգված և ամբողջական ուսումնասիրության բնույթ չունեն: Ներկայացնելով Ջ. Ֆրոյդի, Լ. Վիգոտսկու, Մ. Արնաուդովի, Կ. Լեոնհարդի, Ա. Զուրաբաշվիլու, Բ. Տեպալովի, Կ. Զիժի, Ն. Բաժենովի, Ի. Ստրախովի, հայ իրականության մեջ Մ. Մազմանյանի, Մ. Մելումյանի այդ ոլորտում կատարած ուսումնասիրությունները՝ ցույց է տրվում, որ ուսումնասիրողների մեծ մասը

դիմել է գրականությանը և գրական հերոսներին՝ հոգեկան շեղումներ, հոգեկան սահմանային վիճակներ ցույց տալու միտումով կամ ընդհանուր տեսական հարցերի բննման նպատակով: Մինչդեռ Հ. Թութունջյանը նպատակ է ունեցել քնարերգության օգնությամբ բացահայտել հոգեբանության մեջ այնքան հետաքրքրական սինեսթեզիայի երևույթը՝ որպես ստեղծագործողի անհատական, ինքնատիպ զգայադաշտի բնականոն արգասիք: Անորատառնալով սինեսթեզիայի երևույթին՝ Թութունջյանը կարևորում է դրա դերն ու նշանակությունը թե՛ անհատի կյանքում, թե՛ ստեղծագործական գործընթացում: Փիտանականը շեշտում է այն միտքը, որ պատմական զարգացման ընթացքում տեղի է ունեցել զգայարանների հետագա «մասնագիտացում և կատարելագործում», որն արժեքավորվում է ոչ միայն կենսաբանական, այլ նաև ճանաչողական առումով: Փորձելով սինեսթեզիայի միջոցով բացատրել բանաստեղծական պատկերների ստեղծման արվեստը՝ Հ. Թութունջյանը դրանք փնտրում է Ե. Չարենցի, Վ. Տերյանի, Պ. Դուրյանի, Դ. Վարուժանի, Ա. Ռեմբոյի ստեղծագործություններում և ի վերջո շեշտը դնում հատկապես Ս. Մեծարենցի և Ռ. Դավոյանի պոեզիայի վրա: Հ. Թութունջյանն ապացուցում է, որ բանաստեղծների օգտագործած փոխաբերությունները, պատկերավորման միջոցները ոչ թե բառախաղ են, այլ նրանց հոգեկան ապրումներով անցած երևույթներ, ինչ-որ տեղ զուտ հոգեբանական, նույնիսկ ֆիզիոլոգիական օրինաչափություններ: Հատկանշական է, որ համանման միտք են հայտնում նաև ժամանակակից ուսումնասիրողներ Ջ. Օ' Կոննորը և Դ. Սեյմորը, որոնք գտնում են, որ սինեսթեզիան ծագում է ավտոմատ ձևով, կազմում է մեր մտածողության կարևորագույն մասը և երբեմն այնքան է արմատացած մեր մտածողության մեջ, որ թվում է, թե այն ուղեկցում է մեզ ի ծնե:

Մտածողության գործընթացում տարակույսի դերի հիմնախնդրին անդրադարձը Հ. Թութունջյանը բացատրում է համաշխարհային և խորհրդային հոգեբանական գիտության մեջ դրա քիչ մշակված լինելով: Համեմատական վերլուծության միջոցով ներկայացնելով հիշյալ ժամանակահատվածում խորհրդային հոգեբաններից Ս. Լ. Ռուբինշտեյնի, Բ. Մ. Տեպլովի, Լ. Ի. Անցիֆերովայի՝ մտածողության գործընթացին նվիրված ուսումնասիրությունները՝ ցույց ենք տվել, որ նրանք չեն ձգտագործել «տարակույս» կամ «կասկած» հասկացությունները, սակայն խոսում են մտածողությանը ուժ հաղորդող ներքին մոտիվացիայի, վարկածի և մտահանգումների ճշտությունը որոշելու գործում ստուգման կիրառական և ճանաչողական նշանակության հարցերի մասին: Փիտության մեջ հիշյալ հիմնախնդրին նվիրված հետազոտությունների բացը լրացնելու նպատակով՝ Հ. Թութունջյանն իրականացնում է փորձարարական հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել տարակույսի հոգեբանական մի շարք առանձնահատկություններ և որոշել դրա դերն ու նշանակությունը տրամաբանական մտածողության գործընթացում: Հետազոտության արդյունքները թույլ տվեցին Թութունջյանին կատարել եզրահանգում, որ կասկածը, լինելով անհիմն ենթադրություն, ավելի սերտ է կապված անձնավորության զգացմունքային փորձի, բնավորության հետ, մինչդեռ տարակույսը կապված է անձնավորության մտավոր գործունեության ոճի և նրա տրամաբանության ուժի հետ և, եթե կասկածը ոչ ստույգ իմացություն է, ապա տարակույսի ժամանակ «միտքն այս կամ այն կողմ տարուբերվելու հետ մեկտեղ՝ թեքվում է դեպի մի որոշակի ուղղություն և հենվելով որոշակի փաստերի վրա, խնդրական է դարձնում քննարկող երևույթի ճշտությունը»: Ըստ գիտնականի՝ զգայական ըմբռնումները և փորձը տարակույսի առաջացման հիմք են, սակայն տարակույսի հիմնավորությունը ստուգվում

և հաստատվում է, երբ հակասություն չի առաջանում զգայական ըմբռնումների և տրամաբանական զուգորդումների միջև: Փորձարարական այս հետազոտության արդյունքները և գիտնականի տված կոնկրետ խորհուրդները ուսուցիչներին՝ այսօր էլ գործնական լուրջ արժեք են ներկայացնում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «**Հոգեբանության պատմության հիմնախնդիրները Հ. Մ. Թութունջյանի գիտական ժառանգության մեջ**», վերաբերում է գիտնականի գործունեության երկրորդ արդեն հստակ ուղղվածությամբ շրջանին, որի բովանդակային վերլուծությունը տեսանելի են դարձում հոգեբանության պատմության ոլորտում Հ. Թութունջյանի հոգեբանական հայացքների զարգացումը և այն առանցքային հիմնախնդիրները, որոնց անդրադարձել է գիտնականը: 60-ական թվականներին խորհրդային գիտնականները հոգեբանության պատմության հարցերում թեև հենվում էին դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի սկզբունքների վրա, սակայն դրանք շատ ընդհանուր էին, լուծված չէին տեսամեթոդաբանական մի շարք հարցեր, բացակայում էին հստակ մոտեցումները: Հիմնվելով արևմտյան հեղինակներ Ջ. Բոլդվինի, Օ. Կլեմմի, Ի. Ֆլուգելի, Մ. Ռիուչիմի, Է. Բորինգի, Ռ. Կաթսոնի, Հ. Միսիակի և Վ. Սեքսթոնի, Ի. Կանտորի, Է. Էսփերի՝ հոգեբանության պատմության հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների վրա, շեշտադրվել է հոգեբանության պատմության հիմնախնդիրների մշակման բարդ և խնդրահարույց բնույթը: Նպատակ ունենալով տեսանելի դարձնել հոգեբանության պատմության ոլորտում Հ. Թութունջյանի հայացքների զարգացման տրամաբանությունը՝ քննվում է XX դարում գիտության պատմության ուսումնասիրման վերաբերյալ ծևավորված երկու՝ ինտերնալիստական (Ա. Կոյրեն, Ռ. Հոլլը, Պ. Ռոսսինը, Ի. Պոպերը և Կ. Լակատտը) և էքստերնալիստական (Բ. Գեսսեն, Ղ. Բերնալ, Ջ. Հոլդեյն, Է. Ցիլգել) մոտեցումները:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խորհրդային հոգեբանության պատմության ոլորտի զարգացումը հետաքրքիր և ոչ միանշանակ ընթացք է ունեցել: Սկզբնական շրջանում խորհրդային հոգեբանները առաջնորդվում էին ավելի ընդհանուր, գաղափարախոսական սկզբունքներով՝ հոգեբանության պատմության մեջ վեր հանել դրական՝ մատերիալիստական հայացքները և ամեն կերպ նսեմացնել, խստորեն քննադատել սխալ՝ իդեալիստական հայացքները:

Սեկնարկելով 50-ականների կեսերից՝ խորհրդային հոգեբանության պատմությունը, որպես հոգեբանության առանձին ոլորտ, թափ առավ 60-ականներին: Հ. Թութունջյանի գիտական գործունեության երկրորդ շրջանի և ընդհանրապես խորհրդային հոգեբանության պատմության հետագա զարգացման համար կարևոր իրադարձություն էր 1960 թվականին Երևանում կազմակերպված հոգեբանների անդրկովկասյան համաժողովը: Հիշյալ համաժողովում բուռն քննարկումներ են ծավալվում հատկապես հոգեբանության պատմության հարցերի շուրջ: Այստեղ Բ. Տեպլովը առաջին անգամ փորձում է հստակեցնել հոգեբանության պատմությանը ներկայացվող խորհրդային մոտեցումը, ուրվագծվում է հոգեբանության պատմության կառուցման ծրագիրը: Սույն կոնֆերանսում Հ. Թութունջյանը սկզբունքորեն կարևորեց հոգեբանության պատմության հարցերի մշակումները հոգեբանության պատմության շրջաբաժանման հարցի լուծումից սկսելը: Խորհրդային հոգեբաններ Բ. Տեպլովի, Բ. Անանևի, Ե. Բուդիլովայի, Ա. Ժդանի, Մ. Մազմանյանի, Ա. Լալայանի՝ հոգեբանության պատմության ոլորտում կատարված ուսումնասիրությունների դիտարկումը տեսանելի է դարձրել հոգեբանության պատմության ոլորտում Հ.

Թութունջանի ուսումնասիրությունների ուղղվածությունը, որոնցից մենք կարևորում ենք՝

- հոգեբանության պատմության տեսամեթոդաբանական հարցերի քննարկումները,
- հոգեբանության պատմության և պատմագրության պարբերացման սկզբունքների առաջադրումը և մշակումը,
- հոգեբանության պատմության մեջ առանձին գիտնականների, դպրոցների հոգեբանապատմական վերլուծությունները:

Վերոհիշյալ խնդիրների վերլուծությունը <. Թութունջանի գիտական գործունեության մեջ դիմամիկ զարգացում է ապրել: Փորձելով հիմնավորել հոգեբանության պատմության ուսումնասիրությունների վերաբերյալ տարբեր մոտեցումների առկայությունն՝ գիտնականը նշում է, որ հոգեբանների յուրաքանչյուր սերունդ հոգեբանության պատմության փաստերը և զարգացման գործոնները բացատրում է՝ ելնելով ոչ միայն իր մեթոդաբանական և տեսական դիրքորոշումից, այլ նաև իր ժամանակի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, մշակույթի, գիտության և տեխնիկայի ընդհանուր վիճակից: Նույնիսկ, ըստ գիտնականի, եթե տարբեր սերնդի գիտնականները կանգնած լինեին միևնույն փիլիսոփայական դիրքերի վրա, հոգեբանության պատմագրությունը կունենար տարբեր բովանդակություն, քանի որ հոգեբանական տեսությունների զարգացումը և կյանքի գործնական խնդիրների առաջադրումը անխուսափելիորեն փոխում են գիտական հարցադրումն ու դրա նկատմամբ մոտեցումները:

Գիտության պատմության հարցերում առկա միակողմանիությունը հաղթահարելու նպատակով <. Թութունջանն առաջարկում է հոգեբանության պատմությունը դիտարկել մի կողմից փիլիսոփայական ուղղությունների համեմատության դիրքերից, մյուս կողմից՝ պատմական ժամանակաշրջանի բոլոր կողմերի ազդեցության և գիտական կոնկրետ ձեռքբերումների դիրքերից: Իսկական պատմականությունը դառնում է նրա գիտական ստեղծագործության հիմնական և արդյունավետությունը ապահովող գիծը: Պատմականության սկզբունքը պահանջում է նաև գնահատել հոգեբանների աշխարհայացքը և գիտական ժառանգությունը՝ դրանց ստեղծման և ձևավորման դիմամիկ զարգացման ընթացքում: Նրա կարծիքով սկզբունքային նշանակություն ունի ստեղծագործողի փիլիսոփայական դիրքորոշումը նրա գիտական հայացքներից տարբերելը: <. Մ. Թութունջանի ուսումնասիրություններում այս սկզբունքը սերտորեն կապված է համեմատության մեթոդի հետ, ըստ որի՝ պատմական փաստը կամ երևույթը դիտարկվում է պատմական ժամանակաշրջանում՝ շատ այն շրջանակով փաստերի հետ հարաբերակցության մեջ, որը հնարավորություն է տալիս մի կողմից գնահատել դրա նշանակությունը, մյուս կողմից՝ ցույց տալ գիտելիքի ժառանգականությունը: Արդեն ութսունականներին, կրկին Երևանում կազմակերպված համամիութենական համաժողովում, <. Թութունջանի ուշադրության առարկան է դառնում հոգեբանության պատմության և պատմագրության պարբերացման հիմնախնդիրը: Ցույց է տրվում, որ <. Թութունջանի՝ հոգեբանության պատմության և պատմագրության տարանջատման, շրջաբաժանման հարցի առաջադրումը հիմնավորված է, քանի որ հոգեբանության պատմության տարբեր մոտեցումները մասնատել, տարբեր հարկերի էին բաժանել հոգեբանական գիտելիքի ընթացքը, խախտվել է գիտական մտքի շարունակական զարգացման պատկերը: Ընդունելով ցանկացած պարբերացման պայմանականությունը, այնուամենայնիվ պետք է նշել, որ այն գիտության կոնկրետ ոլորտի համար կարևոր նշանակություն ունի: Այսիմաստով՝ հոգեբանության պատմության շրջաբաժանման կարևորությունը

ակնհայտ է դառնում, քանի որ ենթադրում է՝ մի կողմից հոգեբանական մտքի զարգացման տրամաբանական փուլերի, մյուս կողմից պատմական գործընթացի և հասարակության զարգացման միասնականությունը: Ուստի ենթադրվում է նաև պարբերացումն իրականացնելու չափանիշների և սկզբունքների հստակեցում: Ութսունականների կեսերին նա հանդես է գալիս «ԽՍՀՄ հոգեբանության պատմագրության շրջաբաժանման մասին» հոդվածով, որը խորհրդային հոգեբանության մեջ նորություն էր: Հ. Թութունջյանն առաջադրում է պարբերացման հետևյալ սկզբունքները.

1. արդյունավետության սկզբունք. որքանով է այն նպաստել պատմագրական հետազոտության զարգացմանը տարբեր տարիներին,

2. մշակվածության սկզբունք. հոգեբանության պատմագրության տեսության մշակվածության մակարդակը,

3. նորույթի սկզբունք. պատմագրության հիմնախնդրի առաջադրման և մշակվածության մակարդակը:

Պարբերացման հարցի նման մոտեցումը հնարավորություն է տալիս մշակել գիտականորեն հիմնավորված պատմագրական մոտեցում: Հիմք ընդունելով վերոհիշյալ սկզբունքները՝ գիտնականը առաջին անգամ իրականացնում է խորհրդային հոգեբանության պատմագրության պարբերացումը՝ առանձնացնելով դրա զարգացման չորս փուլերը: Խորհրդային հոգեբանության պատմագրության պարբերացման և համակողմանի վերլուծության Հ. Թութունջյանի փորձը առ այսօր համարվում է ամենաամբողջականը և ընդունելին:

Հետազոտության այս բաժնում ներկայացվում է Հ. Թութունջյանի ներդրումը հայ հոգեբանության պատմության մեջ: Գիտական ճանաչողության ընթացքում ժառանգականության սկզբունքի կիրառումը դարձնելով մեթոդաբանական ուղեցույց՝ գիտնականը այն կիրառում է նպատակ ունենալով ցույց տալ անցյալի գիտական ժառանգության մեծ նշանակությունը ժամանակակից հոգեբանության գիտության համար: Իրար են հաջորդում արևմտահայ մանկավարժներ Ն. Չորոյանի, Ռ. Պերպերյանի, Մ. Մամուրյանի, Ստ. Ոսկանի, Մ. Չերազի հոգեբանական գաղափարների վերլուծությանը նվիրված հոդվածները: Այս հոդվածներում արդեն պատմականության սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս Թութունջյանին հայ առանձին գործիչների հայացքները վերլուծել գիտական լայն համայնապետկերում, հաշվի առնել սոցիալական, քաղաքական յուրահատուկ պայմաններում ձևավորված գիտական մտքի առանձնահատկությունները: 80-ականներին նա գիտական հանրությանն է ներկայացնում «Ղավիթ Անհաղթի հոգեբանական գաղափարները» արժեքավոր հետազոտությունները: Վերլուծելով Ղավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքների ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները (Վ. Չալոյան, Ս. Արևշատյան, Գ. Խաչոյան, Ն. Թահմիզյան)՝ ցույց ենք տվել, որ եթե վերոհիշյալ հեղինակները ներկայացրել են Ղավիթ Անհաղթի ամբողջական փիլիսոփայական հայացքները, ապա Թութունջյանը դրանցից «զտեց» Անհաղթի զուտ հոգեբանական գաղափարները և տվեց հայոց մեջ դեռևս հնագույն ժամանակներում ձևավորված հոգեբանական գաղափարների առկայության ապացույցներ: Հ. Թութունջյանը ստեղծեց Ղավիթ Անհաղթի հոգեբանական հայացքների ամբողջական կոնցեպցիա: Ֆրանսիական հոգեբանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունների վերլուծմամբ ցույց է տրվում, որ խորհրդային հոգեբանական պատմագրությունը այդ ժամանակահատվածում հարուստ չէր ծավալուն հետազոտություններով: Մի շարք մենագրություններով հանդես էին եկել Բ. Անանևը, հոդվածներով՝ Բ. Տեպլովը և Ա.

Պետրովսկին, որոնք հիմնականում նվիրված էին խորհրդային հոգեբանության պատմությանը: 1967 թվականի հոկտեմբերին՝ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանում Հ. Թութունջյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Ֆրանսիական գիտական հոգեբանության պատմությունից» թեմայով: Աշխատանքը բարձր գնահատվեց առաջին հերթին այն պատճառով, որ հեղինակը քննարկվող խնդրի առնչությամբ առաջարկում է սեփական հայեցակարգը (կոնցեպցիան):

Հետազոտության մեջ առաջին անգամ փորձ է արվել գնահատել Ֆրանսիայում հոգեբանական գիտելիքի զարգացումը ամենատարբեր բնագավառներում՝ ավելի քան երեսուն հոգեբանների գիտական ժառանգության ուսումնասիրման հիման վրա: Հ. Թութունջյանն իր աշխատանքի հիմնական նպատակը համարում էր ֆրանսիական գիտական հոգեբանական դպրոցի հարուստ և մյուսներից տարբեր բովանդակության բացահայտումը: Հեղինակի հայեցակարգն այն է, որ պատմականության սկզբունքը պահանջում է գնահատել կոնկրետ հոգեբանի աշխատությունները և հայացքները նրանց ծագման և ձևավորման դինամիկ զարգացման ընթացքում: Այսպիսի մոտեցումը նա առաջարկում է կիրառել թե մատերիալիստ, թե իդեալիստ հոգեբանների աշխարհայացքի գնահատման համար, քանի որ զարգացումը կարող է տեղի ունենալ տարբեր, նույնիսկ հակադիր ուղղություններում: Հ. Թութունջյանը ցույց է տալիս, որ պատմականության սկզբունքի հետ սերտորեն կապված է համեմատության մեթոդը: Այսինքն՝ հնարավոր չէ գնահատել հոգեբանական այս կամ այն բնագավառի նվաճումը համահոգեբանական տեքստից դուրս: Ֆրանսիական հոգեբանության պատմությանը նվիրված նրա ուսումնասիրությունները կրում են պատմահամեմատական բնույթ, որը հնարավորություն է տվել նորովի լուսաբանել ֆրանսիական հոգեբանության զարգացման ընթացքը՝ համաֆրանսիական գիտելիքի լայն համայնպատկերի՝ մատերիալիստական և իդեալիստական ուղղությունների ֆոնի վրա: Նա քննադատորեն է ուսումնասիրում ֆրանսիական հոգեբանության երեք հիմնական ուղղությունները՝ Հ. Պիերոնի, Հ. Վալոնի, Ի. Մեյերսոնի դպրոցները: Փիտնականը ցույց է տալիս, որ այս երեք դպրոցները փորձել են հոգեբանության տեսության և արակտիկայի հարցերը լուծել տարբեր մեթոդներով և տարբեր տեսական դիրքերից. Հ. Պիերոնը՝ փորձարարական, Ի. Մեյերսոնը՝ պատմական և համեմատական, իսկ Հ. Վալոնը՝ գենետիկական և պատմական մեթոդներով: (Հետագայում նա գրեց « Հ. Վալոնի հոգեբանական հայացքները աշխատությունը» և ստեղծեց Հ. Վալոնի հոգեբանական հայացքների կոնցեպցիա): Աշխատանքը հետաքրքիր է իր շարադրման ձևով: Նա բնութագրում և շարադրում է ֆրանսիացի հոգեբանների գաղափարները իրենց պատմական զարգացման ընթացքում, համեմատում է դրանք, վեր է հանում դրանցում առկա ուժեղ և թույլ կողմերը, մատնանշում այդ հեղինակների փորձարարական հետազոտությունների արդյունքների և տեսական ընդհանրացումների անհամաձայնությունը: Շարադրման ընթացքում նա հաճախ է օգտագործում քրեստոմատիայի և գիտական ռեֆերատի ձևը, որոնց շնորհիվ ընթերցողը հաղորդակից է դառնում հոգեբանական հայացքների և որոնումների բարդ աշխարհին: Թութունջյանի եզրահանգումները ևս շատ հետաքրքիր են: Նոր գաղափարների ստեղծման հարցում նա ընդունում է ժառանգականության սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր նոր գաղափար ձևավորվում է հին գաղափարների ստեղծագործ վերամշակման հիման վրա: Ժառանգորդության այս սկզբունքը նա կիրառում է թե ֆրանսիական հոգեբանության, թե համաշխարհային հոգեբանության մեջ:

«Հ. Մ. Թութունջյանի գիտակազմակերպչական գործունեության առանձնահատկությունը» ենթագլխում գործընկերների հիշողությունների, նամականու ուսումնասիրության հիման վրա տեսանելի են դառնում Հ. Թութունջյանի վառ անհատականությունը, կյանքում և աշխատանքում կարգապահությունը, գիտական բծախնդիր հետևողականությունը, հայ հոգեբանության կայացմանը ուղղված Հ. Թութունջյանի ջանքերը: Որպես ամփոփում ներկայացվում են գիտնականի համընդհանուր ճանաչման և գնահատման փաստերը թե՛ խորհրդային ժամանակների, թե՛ մերօրյա հետազոտություններում:

Ներկա հետազոտությունը Հ. Մ. Թութունջյանի գիտական ստեղծագործության պատմահոգեբանական ուսումնասիրության առաջին փորձն է: Իրականացված հետազոտությունը հիմք է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հ. Մ. Թութունջյանի գիտական գործունեությունն իրականացել է խորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանում հոգեբանության գիտական և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման բարդ ժամանակահատվածում, ուստի Հ. Թութունջյանի հոգեբանական հայացքների զարգացումը պատճառականորեն կապված է պատմաքաղաքական պայմանների, գիտության զարգացման տրամաբանության և գիտնականի բնագիտական, հոգեբանական, փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորման հետ:

2. Հ. Մ. Թութունջյանի գիտական գործունեությանը բնորոշ է հետազոտական թեմաների բազմազանությունը, ուստի նրա գիտական կենսագրությունը բաժանվում է երկու փուլի. 1-ին՝ 1950-60-ական թվականների կեսերը, որը առանձնանում է հետազոտական հիմնախնդիրների բազմազանությամբ, 2-րդ՝ 1960-ական թ. կեսերից 80-ական թվականների վերջ, երբ ուսումնասիրության առարկա են դառնում հոգեբանության պատմության և պատմագրության տեսամեթոդաբանական հարցերը:

3. Հ. Մ. Թութունջյանի հետազոտությունները նպաստել են հայ հոգեբանության մի շարք ոլորտների հետագա զարգացմանը: Մասնավորապես՝

► Սպորտի հոգեբանությանը նվիրված փորձարարական հետազոտությունների նորույթը, որը իշխող հետազոտական ընդհանուր, տեսական ուսումնասիրություններից անցումն էր կոնկրետ սպորտաձևում հանդիպող արտաքին և ներքին դժվարությունների բացահայտմանն ու դասակարգմանը. դրա արդյունքում, տարիքային առանձնահատկությունների հիման վրա, մշակվեցին դժվարությունների հաղթահարման, շարժողական հմտությունների և կամային որակների դաստիարակման խնդիրները:

► Ստեղծագործության հոգեբանությանը նվիրված ուսումնասիրություններում հայրենական հոգեբանության մեջ առաջադրվում է հոգեբանության և գրականագիտության փոխհարաբերության և միջգիտական հետազոտության հիմնախնդրի կարևորությունը: Գրական ստեղծագործությունների վերլուծության հիման վրա Հ. Թութունջյանը հիմնավորեց սինեսթեզիայի՝ ստեղծագործողի անհատական առանձնահատկություններով պայմանավորված երևույթի օրինակի, բնականոն լինելու գաղափարը, որը կարող է դառնալ ստեղծագործական մտածողության մեխանիզմների բացատրության հիմ քերից մեկը:

► Առաջին անգամ հայ հոգեբանության մեջ Հ. Թութունջյանը առաջադրեց մանկաբուժական հոգեբանության՝ միջգիտական ճյուղի զարգացման կարևորությունը, որի սկզբունքների և մեթոդների մշակումները այժմ էլ հնարավորություն կտան լայնացնելու երեխայի հոգեբանության հարցերի հետազոտու-

թյունների շրջանակը և համալիր ձևով լուծելու երկու գիտությունների մի շարք հիմնախնդիրներ:

► Մտածողության գործընթացում տարակույսի փորձարարական ուսումնասիրության շնորհիվ Հ. Թութունջյանն առաջին անգամ տարանջատեց տարակույսը կասկածից և տվեց տարակույսի՝ զգայական մակարդակից տրամաբանական մակարդակի անցման օբյեկտիվ հիմնավորումն ու դպրոցականների տրամաբանական մտածողության մեջ տարակուսելու հատկության մշակման ուղիները:

4. Հ. Մ. Թութունջյանի գիտահետազոտական գործունեության ամենանշանակալի ձեռքբերումը հոգեբանության պատմության և պատմագրության՝ որպես առանձին ոլորտի հիմնախնդիրների կոնկրետացումն ու հստակեցումն է:

5. Հոգեբանության պատմագրության պարբերացումը դիտարկելով որպես հոգեբանական գիտելիքի ժառանգականության սկզբունքի կոնկրետ իրականացում՝ Հ. Մ. Թութունջյանը մշակեց հոգեբանության պատմագրության պարբերացման սկզբունքները՝ ըստ արդյունավետության, մշակվածության, նորույթի: Պարբերացման այս սկզբունքների հիման վրա Հ. Թութունջյանն առաջին անգամ իրականացրել է խորհրդային հոգեբանության պատմագրության՝ առայսօր ընդունելի պարբերացումը՝ առանձնացնելով դրա զարգացման չորս փուլ:

6. Հոգեբանական մտքի պատմության ուսումնասիրություններում կարևորելով տվյալ ազգի պատմության ու մշակույթի առանձնահատկությունները՝ Հ. Մ. Թութունջյանն իրականացրեց հոգեբանության պատմության, առանձին մտավորականների գիտական ժառանգությանը նվիրված պատմամշակութային ուսումնասիրություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ ժամանակակից պատմահոգեբանական ուսումնասիրությունների համար:

7. Հ. Մ. Թութունջյանի՝ առանձին գործիչների կամ հոգեբանական դպրոցների գիտական ժառանգության պատմական վերլուծություններին բնորոշ է պոզիտիվ-կառուցողական մոտեցումը, որով բացահայտվել են գիտնականի հայացքների ուժեղ, դրական կողմերը, ժամանակի գիտական մտքի համար կիրառելի գաղափարները, և որը կարող է կիրառվել հետազոտողի կողմից՝ անձի ժամանակակից ուսումնասիրություններում:

8. Ֆրանսիական հոգեբանության պատմության պատմահամեմատական վերլուծությունը՝ իդեալիստական և մատերիալիստական գաղափարների վերլուծության հիման վրա, հնարավորություն է տվել տարանջատել գիտնականի փիլիսոփայական աշխարհայացքը բուն հոգեբանական հայացքներից: Այս մոտեցումը ուսանելի և կիրառելի է նաև այժմ, քանի որ պատմահոգեբանական ուսումնասիրություններում դեռևս հանդիպում է այն սխալ մոտեցումը, երբ գիտնականի ներդրումը գնահատվում է ըստ նրա գաղափարախոսական դիրքորոշման:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում.

1. Կաթունյան Ա.Ս. Գրական փնտթեզիայի հիմնախնդիրները Հ.Մ. Թութունջյանի հոգեբանական ուսումնասիրություններում // Հոգեբանությունը և կյանքը, Եր., 2002, Ձևագակ-97, N 3-4, էջ 136-140:

2. Կաթունյան Ա.Ս. Ֆրանսիական հոգեբանության պատմության ուսումնասիրությունները Հ.Մ. Թութունջյանի գիտական ժառանգության մեջ // Կասն Արդարության, Կանաձոր, 2006, N 3-4, էջ 45-49:

3. Катунян А.С. Проблемы литературной синестезии в психологических исследованиях О.М. Тутунджяна // Материалы международной научно-практической конференции. Синестезия: содружество чувств и синтез искусств, Казань, 2008, изд. КГТУ, стр. 100-102.

4. Կաթունյան Ա.Ս. Սպորտի հոգեբանության հարցերը Հ.Ս. Թութունջյանի գիտական ժառանգության մեջ // Հոգեբանությունը և էյանքը, Եր., 2008, Ջանգալ -97, N 3-4, էջ 127-130:

5. Կաթունյան Ա.Ս. Հ.Ս. Թութունջյան: Կյանքը և գիտական գործունեությունը, Եր., 2008, Ջանգալ-97, 95 էջ:

Катунян Аракся Сережаевна

Психологические взгляды Овсепа Тутунджяна

диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 “Теория и история психологии”

Защита диссертации состоится 20 декабря 2013 г., в 12⁰⁰ на заседании специализированного совета по философии и психологии 064 ВАК РА, действующем при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул.Тиграна Меца 17 .

Актуальность работы: Важность и актуальность исследования обуславливается необходимостью объективного анализа исторического прошлого, истории армянской психологии, научного наследия армянских психологов современной армянской психологической наукой, а так же исследований проблем историографии психологии.

Несмотря на то, что в советский период историко-психологические исследования в армянской психологической науке проводились в рамках принужденной идеологии, имели место серьезные достижения. Однако, в постсоветский период практически отсутствуют целостные и объективные исследования посвященные вообще истории армянской психологической мысли и, в частности, научному наследию советских психологов. В результате - нарушена научная традиция, что препятствует формированию национальной психологической науки.

Так как научная мысль развивается благодаря деятельности отдельных личностей, то анализ жизненного и творческого пути ученого является одним из основных задач истории психологии. Сказанное получает большую важность относительно советской армянской психологической школы так, как именно в советские годы на арену вышли выдающиеся представители армянской психологии – Г. Эдилян, М. Мазманян, Е. Милерян, А. Лалаян, М. Ерицян, О. Тутунджян и другие. Деятельность последних до сегодняшнего дня не была достойным образом проанализирована и оценена.

Цель исследования – выявление вклада О.Тутунджяна в деле развития психологической мысли.

Объект исследования – научная деятельность и научное наследие Овсепа Мовсесовича Тутунджяна.

Предмет исследования – научные взгляды О.М. Тутунджяна, касающиеся психологии.

Задачи исследования:

1. Выявление истоков формирования и дальнейшего развития психологических взглядов О.М. Тутунджяна на основе анализа особенностей советской психологии.

2. Анализ основных этапов биографии и направлений научно-исследовательской деятельности О.М. Тутунджяна.

3. Изучение научных выявлений и разработок практических исследований О.М. Тутунджяна относительно психологии спорта, детской и педагогической психологии, психологии творчества и процесса мышления.

4. Раскрыть вклад О.М. Тутунджяна в разработку проблем истории и историографии психологии.

5. Характеризовать особенности научно-организаторской деятельности О.М. Тутунджяна.

6. Систематизация, библиографическая разработка результатов научной деятельности О.М. Тутунджяна на основе новых архивных материалов.

Новизна исследования:

1. Впервые делается попытка анализа психологических взглядов О.М. Тутунджяна с учетом биографических фактов и условий формирования мировоззрения.

2. Представлена научная биография О.М. Тутунджяна посредством единения всех этапов, что делает возможным всестороннее представление вклада ученого в психологическую науку.

3. Посредством всестороннего анализа представлено научное значение историографических разработок О.М. Тутунджяна в области истории психологии.

4. Систематизировано и библиографически обработано научное наследство О.М. Тутунджяна.

5. Впервые были исследованы материалы из личного архива О.М. Тутунджяна, что дало возможность расширить представления о развитии армянской психологической науки, обогащая ее новыми фактами.

6. Посредством всестороннего анализа дается характеристика стиля научно-организаторской деятельности О.М. Тутунджяна, обоснован вклад ученого в становлении армянской психологической науки.

Теоретическая значимость исследования: Содержание материалов исследования углубляет и расширяет представления об истории армянской психологии, в частности, благодаря онтогенетическому анализу творчества О.М. Тутунджяна стало возможным выявление процесса становления армянской советской психологии. Теоретические обобщения в результате исследований в области психологии спорта, детской и педагогической психологии, психологии творчества могут обогатить отмеченные области новым содержанием, а межнаучные комментарии по поводу ряда психических явлений могут способствовать дальнейшему развитию междисциплинарных ветвей. Посредством исследований в области истории психологии представлен практический потенциал научного наследия О.М. Тутунджяна, который может способствовать развитию историографии армянской психологии, разработке теоретико-методологических задач в современных историко-психологических исследованиях.

Практическая значимость исследования определяется теоретическими и методологическими задачами, рассматриваемыми в диссертации. Материалы диссертации могут быть использованы при преподавании "Истории психологии", специальных дисциплин "Советская армянская психология" и "История армянской психологической мысли", а также в качестве источника информации для работ касательно историографии психологии и соответственных библиографических исследований.

Структура работы: Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и трех приложений.

**KATUNYAN ARAKSYA SERYOZHA
PSYCHOLOGICAL VIEWPOINTS OF HOVSEP TUTUNJYAN**

19.00.01-Dissertation on <Theory and History of Psychology> to apply for the scientific degree of candidate of psychological sciences

The defence of the dissertation shall take place on December 20, 2013 at 12⁰⁰ o'clock, in number 064 Professional Council on Philosophy and Psychology of Higher Qualification Commission at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 17 Tigran Mets Street, 0010 Yerevan

Modern Character of the Work: The importance and modern character of this research work are conditioned by objective analysis of historical past in the contemporary Armenian psychology, analysis of Armenian history of psychology and the scientific heritage of Armenian psychologists, as well as demand for surveys dedicated to basic issues of historiography of psychology.

During the Soviet period although the historical-psychological investigations on Armenian psychology were carried out at mandatory ideological platform psychology has nevertheless reached serious achievements. While during post-Soviet period, there are no unbiased and comprehensive research works dedicated to the history of Armenian psychological thought in general and particularly to scientific heritage of Soviet psychologists. This has resulted in breach of continuity of scientific tradition, which impedes formation of national path in psychology.

The scientific thought originates and develops due to efforts of Individuals, therefore the analysis of scientific biography and career of a scientist is one of the key issues of the history of psychology. The above mentioned gains even more importance in terms of Soviet Armenian psychological school, as during Soviet period such well-known figures in Armenian psychology as G. Edilyan, M. Mazmanyanyan, E. Mileryan, A. Lalayan, M. Eritsyanyan, H. Tutunjan and others, whose works have not been properly analyzed and evaluated, entered the scene.

The objective of research work is to reveal the contribution of H. M. Tutunjan in development of psychological thought.

The object of research is the scientific heritage and work of Tutunjan Hovsep Movses.

The subject of research is his scientific viewpoints regarding psychology.

The issues focus mainly on:

1. finding out the sources and further development of formation of H. M. Tutunjan's psychological viewpoints on the basis of analysis of peculiarities of Soviet psychology.
2. analyzing the main phases and directions of H. M. Tutunjan's biography and scientific research work.
3. studying H. M. Tutunjan's scientific revelations and elaborations in the spheres of sport, child pedagogy and psychology of creativity, as well as in theoretical and experimental studies concerning the thinking process.
4. analysing H. M. Tutunjan's logic of development of notions concerns the fundamental issues of the history of psychology and elaboration of principles

of Soviet historiography, and ideas constituting the kernel of historical and psychological conception.

5. bringing to light the significance of H. M. Tutunjyan's contribution in the history of psychology and historiography.
6. characterizing the peculiarities of scientific and organizational work of H. M. Tutunjyan.
7. coordinating and subject to bibliographical elaboration scientific works of H. M. Tutunjyan and new facts concerning his biography and scientific pedagogical work on the basis of archive materials.

Scientific novelty of research work

1. For the first time attempt is made to analyze H. M. Tutunjyan's psychological viewpoints taking into account his biographical facts and conditions for formation of his world outlook.
2. H. M. Tutunjyan's scientific biography was introduced by means of integration of all phases, which gives an opportunity to fully demonstrate his contribution in psychology.
3. The scientific significance for psychology of H. M. Tutunjyan's elaborations and historiographical approach is indicated through comprehensive analysis.
4. H. M. Tutunjyan's scientific heritage is coordinated and subjected to bibliographical elaboration.
5. For the first time the personal archive materials, letters of H. M. Tutunjyan have been investigated, which has given an opportunity to widen the notions concerning the development of Armenian psychology, adding new facts to them.
6. The style of H. M. Tutunjyan's scientific and organizational work and his contribution in the making of psychological science through comprehensive analyses, have been characterized.

Theoretical significance of research work

The content of research materials deepens and widens the notions on the history of Armenian psychology. In particular due to ontogenetic analysis of Tutunjyan's work it becomes possible to understand the processes of formation of Soviet psychology. The theoretical generalizations of research in the spheres of sport, child pedagogy and psychology of creativity may enrich the above mentioned spheres with new content, and the inter-scientific comments on a range of psychological phenomena may boost further development of interdisciplinary fields. The applied potential of H. M. Tutunjyan's scientific heritage has been shown through investigations made in the field of the history of psychology, which may foster the development of Armenian psychological historiography, and elaboration of theoretical and methodical issues related to contemporary historical and psychological investigations.

The practical significance of the investigation is conditioned by theoretical and methodological issues discussed in the dissertation. The materials of the dissertation may be used in the course <History of Psychology>, special courses «Soviet Armenian psychology», and «History of Armenian Psychological Thought». They may also become informational sources for works related to psychological historiography and respective investigations on bibliography.

Dissertation structure: the dissertation consists of introduction, two chapters, conclusion, bibliography and three Annexes.